Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
հոկտեմբերի 5 -ի նիստի N 42
արձանագրային որոշման

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդական հրահանգի (այսուհետ՝ հրահանգ) նպատակն է կանոնակարգել պետական եկամուտների և անմիջական ծախսերի վրա ազդեցություն ենթադրող ռազմավարական փաստաթղթերի կազմման, ներկայացման և հսկողության իրականացման գործընթացը: Սույն հրահանգը տարածվում է միայն ՀՀ այն ռազմավարական փաստաթղթերի վրա, որոնք ունեն կամ ենթադրում են անմիջական ազդեցություն պետական եկամուտների և ծախսերի վրա:

2. Հրահանգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) Համապարփակ ռազմավարական փաստաթուղթ՝ բոլոր կամ գրեթե բոլոր հիմնական ֆունկցիոնալ ոլորտներն ընդգրկող երկարաժամկետ ռազմավարական փաստաթուղթ:

2) Միջին մակարդակի ռազմավարական փաստաթուղթ՝ առանձին ֆունկցիոնալ ոլորտի կամ բնագավառին առնչվող միջնաժամկետ կամ երկարաժամկետ ռազմավարական փաստաթուղթ:

3) Բյուջետային ծրագրի ռազմավարություն՝ բյուջետային ծրագրի բաղկացուցիչ մաս, որը սահմանում է բյուջետային ծրագրի նպատակը և նկարագրում է այդ նպատակին հասնելու համար ընտրված ուղին: Ծրագրային բյուջետավորման ռազմավարական փաստաթղթի օրինակներ կարող են դիտարկվել Բարձրագույն կրթության զարգացման պետակա ծրագիրը (կցվում է) կամ «Երեխաների եվ դեռահասների առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 02.09.2016 թվականի N34 արձանագրային որոշումը, «Հայաստանի Հանրապետության բնակչության շտապ բժշկական օգնության և սպասարկման 2016-2020 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 15.04.2016 թվականի N14 արձանագրային որոշումը:

4) Կառավարության ծրագիր՝ ՀՀ սահմանադրության Հոդված 151 համաձայն ՀՀ վարչապետի կողմից ՀՀ Ազգային ժողովին ներկայացվող ծրագիր:

5) Միջնաժամկետ ծախսերի ծրագիր (ՄԺԾԾ)՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2,2 – ից 2.10-րդ կետերին համապատասխան մշակվող և հաստատվող ծրագիր:

6) Բյուջետային ծրագիր՝ որևէ նպատակին (ուղղակի սահմանված արդյունքին) հասնելուն ուղղված քաղաքականության իրագործման միջոցառումների (այսուհետ՝ ծրագրի միջոցառումներ) տրամաբանական խմբավորումն է՝ համապատասխան ֆինանսավորմամբ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2-ի հոդվածի 2-րդ, 9-րդ,17-րդ,18-րդ. կետերին համապատասխան:

7) Բյուջետային ծրագրի միջոցառում՝ ծրագրի շրջանակներում պետության քաղաքականության իրագործման նպատակով իրականացվող պետության միջամտություններն են (ծառայությունների մատուցում, տրանսֆերտների տրամադրում և այլն), որոնք նպատակաուղղված են տվյալ ծրագրի համար սահմանված նպատակի իրագործմանը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2. հոդվածի 2-րդ, 9-րդ,17-րդ,18-րդ. կետերին համապատասխան համապատասխան:

8) Ռազմավարական նպատակ՝ ռազմավարությամբ սահմանված խնդիրների լուծման հետևանքով ակնկալվող արդյունք(ներ)

9) Արդյունք՝ սոցիալական, տնտեսական, մշակութային, շրջակա միջավայրի կամ այլ բնույթի փոփոխություններ (ազդեցություններ) են, որոնց ձգտում է հասնել պետությունը հանրության համար:

ա.Վերջնական արդյունք՝ արտահայտում է ընդհանրական արդյունքներ համապետական, ոլորտային կամ բնագավառի մակարդակով:

բ.Միջանկյալ արդյունք՝ արտահայտում է արդյունքներ ենթաոլորտի կամ կոնկրետ երևույթի մակարդակով, որը նպաստում է որևէ կոնկրետ վերջնական արդյունքին հասնելուն:

գ.Ուղղակի արդյունք՝ արտահայտում է կոնկրետ բյուջետային ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացմամբ պայմանավորված անմիջական արդյունքները, որոնց իրագործումը նպաստում է կոնկրետ միջանկյալ կամ վերջնական արդյունքին հասնելուն:

10) Ծախսերի ուսումնասիրություն՝ փաստացի տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, որը հիմնավորում է ռազմավարական փաստաթղթով առաջադրված պետական ծախսերի կատարման նպատակահարմարությունը՝ ռազմավարական փաստաթղթով նախանշված արդյունքներին առավել համապատասխան և արդյունավետ ճանապարհով հասնելու առումով:

II. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻԵՐԱՐԽԻԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Ընդգրկման շրջանակներով, ժամկետայնությամբ և պետական ծախսերի վրա ազդեցության շրջանակներով պայմանավորված, ռազմավարական փաստաթղթերը դասակարգվում են հետևյալ 3 հիմնական խմբերում՝

համապարփակ ռազմավարական փաստաթղթեր, միջին մակարդակի ռազմավարական փաստաթղթեր, բյուջետային ծրագրերի ռազմավարություններ:

4. Սույն հրահանգը չի տարածվում ՀՀ կառավարության ծրագրի և ՄԺԾԾ վրա: ՀՀ կառավարության ծրագիրը և ՄԺԾԾ հանդիսանում են ռազմավարական փաստաթղթեր, որոնց մշակման, հաստատման և հաշվետվողականության ժամկետները և կարգը սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով:

5. Ռազմավարական փաստաթղթերը պետք է պարունակեն փաստաթղթում նշված նպատակներին հասնելու ճանապարհների, գործողությունների կամ միջոցառումների նկարագրությունը՝ հիմնավորելով այդ գործողությունների հստակ կապը նախատեսվող արդյունքների հետ: Դրանք կարող են փաստաթղթին կցվել հավելվածի տեսքով, հստակ նշելով, թե միջոցառումը, գործողությունը ռազմավարական որ նպատակի իրագործմանն է ուղղված, կամ նկարագրվել փաստաթղթի տեքստային մասում՝ յուրաքանչյուր ռազմավարական նպատակի հիմնավորման, ակնկալվող արդյունքի հետ միաժամանակ:

<u>Համապարփակ ռազմավարական փաստաթղթերը</u>

6. Ընդգրկումը. Համապարփակ ռազմավարական փաստաթղթերը (ՀՌՓ) հանդիսանում են համապետական նշանակության (միջոլորտային) երկարաժամկետ ռազմավարություններ: Վերջիններս ընդգրկում են բոլոր կամ գրեթե բոլոր ֆունկցիոնալ ոլորտները:

7. Ժամկետայնությունը. ՀՌՓ պետք է ընդգրկի որպես կանոն 5 և ավելի տարիների ժամանակահատված:

8. Մշակման հիմքերը. ՀՌՓ նախաձեռնվումվում և վերանայվում են ՀՀ կառավարության որոշմամբ: Դրանք անմիջականորեն բխում են ՀՀ սահմանադրությունից, մասնավորապես Հոդված 86, ՀՀ օրենքներից, ՀՀ կառավարության ծրագրից և ՀՀ միջազգային պարտավորություններից:

9. Ակնկալվող արդյունքները. ՀՌՓ սահմանվում են երկրի երկարատև զարգացման ռազմավարական նպատակները: Դրանք սահմանվում են առնվազն ոլորտային մակարդակում՝ երկարաժամկետ վերջնական արդյունքների (ազդեցությունների) տեսքով:

10. Մշակող և հաստատող մարմինը. ՀՌՓ մշակվում են Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի, կամ այդ նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովների կողմից և հաստատվում են ՀՀ կառավարության կողմից:

11. Իրականացնող մարմինը. Որպես կանոն, ՀՌՓ իրականացվում են մեկից ավելի պետական կառավարման համակարգի մարմինների կողմից, իսկ այդ ռազմավարությունների իրականացման աշխատանքների համակարգումը, մեթոդական ուղղորդումն, դրանց իրականացման առաջընթացի մշտադիտանցման արդյունքների ամփոփումը և ընդհանուր հսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության աշխատակազմի Ռազմավարական պլանավորման կառուցվածքային միավորի կողմից:

12. Հաշվետվողականություն, մշտադիտարկում և առաջընթացի գնահատում. Յուրաքանչյուր տարի (ռազմավարության ընդգրկման ժամանակահատվածի երկրորդ տարվանից սկսած) մինչև մարտի 15-ը պատասխանատու պետական

կառավարման համակարգի մարմինները ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացնում ռազմավարության առաջընթացի հաշվետվությունը, որի նկատմամբ պահանջները սահմանվում են ռազմավարությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ՀՀ վարչապետի որոշմամբ: Առաջընթացի ամփոփ հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ կառավարության հավանությանը մինչև ապրիլի 15-ը:

13. Պետական ծախսերի վրա ազդեցությունը. Պետական ծախսերի վրա ազդեցության առումով, ՀՌՓ-ները, որպես կանոն, կարող են հանգեցնել երկարաժամկետ հատվածում պետական ծախսերի ընդհանուր մակարդակի ավելացման կամ նվազեցման: ՀՌՓ-ով, որպես կանոն, 2-րդ տարվանից սկսած, պետք է սահմանվեն պետական ծախսերի ցուցիչի սահմանաքանակները՝ ՀՆԱ-ի նկատմամաբ տոկոսների և/կամ իրական արժեքների և/կամ պետական բյուջեում տեսակարար կշիռների տեսքով՝ հիմնականում ըստ առանձին ֆունկցիոնալ խոշորացված ոլորտների: ՀՌՓ պետական ծախսերի գնահատականները տրվում են ՝ հիմք ընդունելով տվյալ ֆունկցիոնալ ոլորտում իրականացված ծախսային ուսումնասիրությունները, միջազգային համեմատականները, ինչպես նաև երկարաժամկետ մակրո-ֆիսկալ և ժողովրդագրական կանխատեսումները: Ծախսային գնահատականների հիմնական նպատակն է՝ սահմանել երկարաժամկետ միջոլորտային համամասնությունները, ինչպես նաև ընթացիկ/կապիտալ ծախսերի համամասնությունները, որոնք առավել չափով նպաստելու են ՀՌՓ ակնկալվող արդյունքներին հասնելուն: ՀՌՓ մշակման նպատակով իրականացված պետական ծախսերի գնահատականները պետք է բոլոր պետական կառավարման համակարգի մարմինների համար հետագայում հիմք հանդիսանան ապագա միջին մակարդակի ռազմավարությունների, ՄԺԾԾ և բյուջետային ծրագրերի մշակման և վերանայման համար: ՀՌՓ պետական ծախսերի գնահատականները կարող են նաև հրապարակվել ընդհանրական տեսքով:

14. ՀՌՓ-ները,որպես կանոն, ենթակա են վերանայմանոչ շուտ քան երեք տարին մեկ անգամ:

<u>Միջին մակարդակի ռազմավարական փաստաթղթերը</u>

15. Ընդգրկումը. Միջին մակարդակի ռազմավարական փաստաթղթերը (ՄՄՌՓ) հանդիսանում են ոլորտային միջնաժամկետ կամ երկարաժամկետ ռազմավարություններ: Վերջիններս ընդգրկում են մեկ կոնկրետ ոլորտ կամ բնագավառ (օրինակ՝ սոցիալական պաշտպանության ոլորտը, մշակույթի ոլորտը, տարածքային զարգացման բնագավառը և այլն):

16. Ժամկետայնությունը. ՄՄՌՓ պետք է ընդգրկի, որպես կանոն, 5 և ավելի տարիների ժամանակահատված:

17. Մշակման հիմքերը. ՄՄՌՓ մշակման նախաձեռնությունը ներկայացվում է ՀՀ համապատասխան ոլորտային նախարարների կողմից: ՄՄՌՓ մշակվում և վերանայվում են ՀՀ վարչապետի որոշմամբ: ՄՄՌՓ մշակման կամ վերանայման նախաձեռնությամբ պետք է հիմնավորվի ՄՄՌՓ մշակման կամ վերանայման անհրաժեշտությունը, մասնավորապես, դրա իրավական, տնտեսական, սոցիալական և/կամ այլ հիմքերը, ներկա իրավիճակի համառոտ նկարագիրը, ակնկալվող արդյունքները և պետական ծախսերի վրա ազդեցության նախնական գնահատականները, ինչպես նաև մշակման համար պահանջվող ռեսուրսները և

մշակման ժամկետները: ՄՄՌՓ պետք է անմիջականորեն բխեն ՀՌՓ-ից կամ Կառավարության ծրագրից, ինչպես նաև սույն հրահանգով ՀՌՓ համար սահմանված հիմքերից, եթե ՄՄՌՓ մշակման որոշման ընդունման պահին ՀՌՓ-երից որևէ մեկը չի ընդգրկում տվյալ ոլորտը կամ բնագավառը:

18. Ակնկալվող արդյունքները. ՄՄՌՓ ռազմավարական նպատակները սահմանվում են առնվազն ենթաոլորտային կամ կոնկրետ երևույթի մակարդակում՝ միջանկյալ և ուղղակի արդյունքների տեսքով: ՄՄՌՓ-ներով պարտադիր պետք է ներկայացվի, ակնկալվող արդյունքների ստորադասություն, այսինքն, թե նախատեսվող միջանկյալ արդյունքները հիմնականում, որ վերջնական արդյունք(ներ)ին են նպաստելու: Իրենց հերթին, յուրաքանչյուր միջանկյալ արդյունք պետք է ներկայացվի նաև դրան նպաստող մեկից ավելի ուղղակի արդյունքների տեսքով: Եթե ՄՄՌՓ-ով որևէ միջանկյալ արդյունք չի նախատեսում մեկից ավելի ուղղակի արդյունքներ, ապա համարվում է, որ տվյալ միջանկյալ արդյունքը իրենից ներկայացնում է նաև ուղղակի արդյունք: Պետք է նկատի ունենալ, որ ուղղակի արդյունքներից յուրաքանչյուրը հիմք է հանդիսանում բյուջետային մեկ ծրագրի համար:

19. Մշակող և հաստատող մարմինը. Միջին մակարդակի ռազմավարական փաստաթղթերը մշակվում են համապատասխան ոլորտային պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմինների կողմից և հաստատվում են ՀՀ կառավարության կողմից, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև ՀՀ Ազգային Ժողովի կողմից:

20. Իրականացնող մարմինը. Որպես կանոն, ՄՄՌՓ իրականացվում են այն մշակող և ներկայացնող պետական կառավարման համակարգի մարմնի կողմից, իսկ այդ ռազմավարությունների իրականացման աշխատանքների համակարգումն ու դրանց իրականացման նկատմամբ ընդհանուր հսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության աշխատակազմի Ռազմավարական պլանավորման կառուցվածքային միավորի կողմից:

21. Հաշվետվողականություն, մշտադիտարկում և առաջընթացի գնահատում. Յուրաքանչյուր տարի (ռազմավարության ընդգրկման ժամանակահատվածի երկրորդ տարվանից սկսած) մինչև ապրիլի 15-ը պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմինները ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացնում ռազմավարության առաջընթացի հաշվետվությունը, որի նկատմամբ պահանջները սահմանվում են ռազմավարությամբ, միաժամանակ այն հրապարակելով պետական կառավարման համակարգի մարմնի պաշտոնական կայքում:

22. Պետական ծախսերի վրա ազդեցությունը. Պետական ծախսերի վրա ազդեցության առումով, ՄՄՌՓ-ները, որպես կանոն, կարող են հանգեցնել ՄԺԾԾ ընդհանուր և ոլորտային սահմանաչափերի ներսում միջծրագրային վերաբաշխումների, այդ թվում նոր բյուջետային ծրագրերի նախատեսմամբ և/կամ գործող բյուջետային ծրագրերի դադարեցմամբ: Միջին մակարդակի ռազմավարությունները պահանջում են ուղղակի արդյունքների մասով պետական ծախսերի ուսումնասիրությունների իրականացում:

23. Միջին մակարդակի ռազմավարական փաստաթղթի օրինակ կարող է դիտարկվել Կրթության ոլորտի զարգացման ծրագիրը:

Բյուջետային ծրագրերի ռազմավարությունները

24. Ընդգրկումը. Բյուջետային ծրագրի ռազմավարությունը (ԲԾՌ) հանդիսանում է բյուջետային ծրագրի բաղկացուցիչ մասը, որը սահմանում է բյուջետային ծրագրի նպատակը և նկարագրում է այդ նպատակին հասնելու համար ընտրված ուղին: Յուրաքանչյուր կոնկրետ ծրագրի դեպքում, այն ընդգրկում է այդ ծրագրի իրականացման համար պատասխանատու կոնկրետ պետական կառավարման համակարգի մարմնի իրավասության ներքո գտնվող ենթաոլորտները:

25. Ժամկետայնությունը. ԲԾՌ, որպես կանոն, պետք է ընդգրկի առնվազն 3 տարվա ժամանակահատված:

26. Մշակման հիմքերը. ԲԾՌ մշակվում և վերանայվում են համապատասխան բյուջետային ծրագիրն իրականացնողպետական կառավարման համակարգի մարմնի նախաձեռնությամբ՝ ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնությամբ: Յուրաքանչյուր բյուջետային ծրագիր պարտադիր պետք է պարունակի ԲԾՌ բաղադրիչը, ուստի նոր բյուջետային ծրագրերի դեպքում ԲԾՌ-ի մշակումն իրականացվում է ծրագրի այլ բաղադրիչների նախագծման հետ միաժամանակ: ԲԾՌ վերանայումը ենթադրում է բյուջետային ծրագրի նպատակի կամ դրան հասնելու եղանակի վերանայում, ուստի նման նախաձեռնության պարագայում, համապատասխան նախաձեռնությամբ պետք է հիմնավորվի ԲԾՌ վերանայման անհրաժեշտությունը, մասնավորապես դրա հիմքերը, ներկա իրավիճակի համառոտ նկարագիրը, ակնկալվող արդյունքները և պետական ծախսերի վրա ազդեցության նախնական գնահատականները, ինչպես նաև վերանայման համար պահանջվող ռեսուրսները և դրա ժամկետները: ԲԾՌ պետք է անմիջականորեն բխեն համապատասխան ՄՄՌՓ-ներից, ինչպես նաև սույն հրահանգով ՀՌՓ-երի կամ ՄՄՌՓ-ների համար սահմանված հիմքերից, եթե ԲԾՌ մշակման/վերանայման որոշման ընդունման պահին ՀՌՓ-ից կամ ՄՄՌՓ ներից որևէ մեկը չի ընդգրկում առաջադրվող նպատակը՝ ուղղակի արդյունքի տեսքով: ԲԾՌ-ները մշակելիս կամ վերանայելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այդ պահին գործող ՄԺԾԾ փաստաթղթով համապատասխան տարիների համար նախատեսված ոլորտային կամ ծրագրային սահմանափակումները:

27. Ակնկալվող արդյունքները. Յուրաքանչյուր ծրագրի ԲԾՌ-ով պետք է սահմանվի մեկ ռազմավարական նպատակ՝ ուղղակի արդյունքի տեսքով: ԲԾՌ-ով պարտադիր պետք է ներկայացվի, թե որ միջանկյալ, իսկ դրա բացակայության դեպքում, որ վերջնական արդյունքին է հիմնականում նպաստելու նախատեսվող ուղղակի արդյունքը: Պետք է նկատի ունենալ, որ բյուջետային ծրագրի համապատասխան ծրագրային միջոցառումների իրականացման միջոցով պետք է հնարավոր լինի անմիջականորեն իրագործել ԲԾՌ նպատակը (ակնկալվող ուղղակի արդյունքը):

28. Մշակող և հաստատող մարմինը. ԲԾՌ-ները մշակվում և հաստատվում են համապատասխան ոլորտային պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմինների կողմից, ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնությամբ: Հաստատված ԲԾՌ-ները պետք է գրանցվեն ՀՀ ֆինանսների նախարարությունում:

29. Իրականացնող մարմինը. Որպես կանոն, այդ ռազմավարություններն իրականացվում են այն մշակող և հաստատող պետական կառավարման համակարգի մարմինի կողմից՝ ՄԺԾԾ և բյուջետային ծրագրի իրականացման շրջանակներում, իսկ այդ ռազմավարությունների մշակման աշխատանքների համակարգումը, մեթոդական ուղղորդումն ու դրանց իրականացման նկատմամբ ընդհանուր հսկողությունն իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

30. Հաշվետվողականություն, մշտադիտարկում և առաջընթացի գնահատում. ԲԾՌ-ներով սահմանված պահանջների վերաբերյալ հաշվետվողականությունը, մշտադիտարկումն ու առաջընթացի գնահատումն իրականացվում է այդ գործընթացների համար ՀՀ բյուջետային օրենսդրությամբ ՄԺԾԾ և տարեկան բյուջեի համար սահմանված գործընթացների շրջանակներում և դրանց համապատասխան:

31. Պետական ծախսերի վրա ազդեցությունը: Պետական ծախսերի վրա ազդեցության առումով, ԲԾՌ-ները, որպես կանոն, կարող են հանգեցնել ՄԺԾԾ ծրագրային սահմանաչափերի ներսում ներծրագրային՝ ծրագրային միջոցառումների միջև վերաբաշխումների, այդ թվում նոր ծրագրային միջոցառումների տեսքով և/կամ գործող ծրագրային միջոցառումների դադարեցմամբ: Այդ ռազմավարությունները պահանջում են ծրագրի միջոցառումների մակարդակում պետական ծախսերի ուսումնասիրությունների իրականացում:

III. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

32. Ստորև ներկայացված բովանդակային պահանջները տարածվում են բոլոր մակարդակի ռազմավարական փաստաթղթերի համար, բացառությամբ ՀՀ կառավարության ծրագրի և ՄԺԾԾ փաստաթղթերի: ՀՀ կառավարության ծրագրի բովանդակությունը հիմնականում ձևավորվում է քաղաքական գործընթացների արդյունքում և դրանց համար նշված պահանջների կիրառությունն ունի բացառապես հայեցողական բնույթ:

<u>Ռազմավարական նպատակների սահմանումը</u>

33. Ռազմավարական նպատակները պետք է ուղղված լինեն ռազմավարական հիմնախնդիրների լուծմանը և նկարագրեն ռազմավարության իրագործմամբ ակնկալվող այն արդյունքները, որոնց ցանկանում է հասնել պետությունը կամ կառավարությունը հանրության համար: Ընդ որում, ակնկալվող արդյունքները կարող են դիտարկվել որպես հասարակության/հանրության կյանքի պայմանների բարելավում կամ դրան նպաստող դրական փոփոխություն և պետք է ներկայացվեն որպես տնտեսական, սոցիալական, մշակութային, շրջակա միջավայրի կամ այլ բնույթի փոփոխություն, որին փորձում է ներազդել պետությունն իր գործունեությամբ:

34. Ռազմավարական նպատակների սահմանումը (դրանց հիերարխիան) պետք է նախապայման հանդիսանա բյուջետային ծրագրերի և միջոցառումների ձևավորման համար, որոնք վերջին հաշվով, պետք է նպաստեն այդ նպատակների իրագործմանը:

35. Ռազմավարական նպատակները կարող են սահմանվել տարբեր մակարդակներում, ուստի դրանց հիերարխիան պետք է հնարավորինս արտացոլի համապատասխան ռազմավարական փաստաթղթերի հիերարխիան: Ավելի ցածր մակարդակի ռազմավարական փաստաթղթերով սահմանվող նպատակները պետք է անմիջականորեն բխեն ավելի բարձր մակարդակի համապատասխան ռազմավարություններով սահմանված նպատակներից և հստակեցնեն դրանց իրագործման տրամաբանությունը:

36. Սույն հրահանգի իմաստով ռազմավարական նպատակները պետք է ունենան վերջնական, միջանկյալ և ուղղակի արդյունքներ

36.1 Վերջնական արդյունքները հանդիսանում են ռազմավարական նպատակների հիերարխիայի բարձրագույն մակարդակը և սովորաբար արտահայտում են ընդհանրական արդյունքներ համապետական, ոլորտային կամ բնագավառի մակարդակով: Դրանք ըստ էության հանդիսանում են ընդհանուր կամ ոլորտային մակարդակի տնտեսական, սոցիալական կամ այլ ազդեցություններ (օրինակ՝ աղքատության մակարդակի նվազեցում, տնտեսական աճի տեմպի բարձրացում և այլն): Վերջնական արդյունքները կարող են կենտրոնանալ ընդհանուր բարելավումների, նպատակային արդյունավետության, ռիսկերի նվազեցման հարցերի վրա:

36.2Միջանկյալ արդյունքները հանդիսանում են ռազմավարական նպատակների հիերարխիայի միջին մակարդակը և սովորաբար արտահայտում են արդյունքներ (ազդեցություններ) ենթաոլորտի կամ կոնկրետ երևույթի մակարդակով: Միջանկյալ արդյունքները կարող են արտահայտել վարքագծի և կենսաձևի փոփոխություններ, ռիսկերի նվազեցում և այլն: Որպես կանոն, միջանկյալ արդյունքներն անմիջականորեն բխում են համապատասխան վերջնական արդյունքներից և նպաստում են դրանց իրագործմանը:

36.3 Ուղղակի արդյունքները հանդիսանում են ռազմավարական նպատակների հիերարխիայի ստորին մակարդակը և որպես կանոն, արտահայտում են կարճաժամկետ (արագ) ազդեցություններ առավել ցածր մակարդակում (օրինակ՝ շահառուների մակարդակում և այլն): Ուղղակի արդյունքները կարող են արտահայտել ավարտվածության մակարդակ, ստացված օգուտներ, շարժառիթների փոփոխություն, հերթերի կրճատում և այլն: Որպես կանոն, ուղղակի արդյունքներն անմիջականորեն բխում են համապատասխան միջանկյալ արդյունքներից և ուղղակիորեն նպաստում են դրանց իրագործմանը:

37. Ընդհանրական բնույթի ռազմավարական նպատակների (հատկապես, վերջնական արդյունքների) հետ անմիջական կապը կարող է բյուջետային ծրագրերը դարձնել չափից դուրս ընդգրկուն և ոչ թիրախավորված: Այդ առումով, բյուջետային ծրագրերի նպատակները պետք է սահմանվեն ուղղակի արդյունքների մակարդակով: Դրանք պետք է արտահայտեն այն անմիջական (կարճաժամկետ) արդյունքները, որոնց ձեռք բերումը անմիջականորեն պայմանավորված է ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացմամբ, և որոնք իրենց հերթին նպաստում են համապատասխան միջանկյալ կամ վերջնական արդյունքների ձեռք բերմանը:

38. Ցանկացած մակարդակում, ռազմավարական նպատակները (ակնկալվող արդյունքները) պետք է սահմանվեն հնարավորինս հստակ և չափելի արդյունքային

ցուցանիշներով: Դրանք պետք է հնարավոր լինի ներկայացնել թվային տեսքով և քանակապես՝ որոշակի հենանիշի կամ ժամանակահատվածի նկատմամբ, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկման ենթարկել դրա իրագործումը: Այլ կերպ ասած, անհնար է հասկանալ և գնահատել որևէ նպատակի իրագործումը կամ դրա գծով առաջընթացը, եթե այն չափելի չի:

39. Նպատակը և դրա իրականացման ժամկետը պետք է լինեն փոխկապակցված: Նպատակը համարվում է ժամկետի հետ փոխկապակցված, եթե այն օբյեկտիվորեն կարող է իրականացվել որոշակի ժամանակի ընթացքում և դրա իրագործման համար կարող է սահմանվել վերջնաժամկետ:

40. Պետք է, նկատի ունենալ, որ ի տարբերություն ուղղակի արդյունքների, երբեմն դժվար է լինում գնահատել կոնկրետ բյուջետային ծրագրի ազդեցությունը համապատասխան վերջնական (հաճախ նաև միջանկյալ) արդյունքների իրագործման վրա, քանզի վերջինիս վրա, բացի բյուջետային ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներից, ազդում են նաև բազմաթիվ այլ ներքին և արտաքին գործոններ: Այդ առումով, վերջնական (ավելի քիչ չափով նաև միջանկյալ) արդյունքները լիովին վերահսկելի չեն ու թեև կառավարությունը պլանավորում է վերջնական արդյունքի նպատակային ցուցանիշները, հետևում է դրանց իրագործմանը և հաշվի է առնում հաջորդող ժամանակաշրջանի պլանավորման փուլում, սակայն առանձին պետական կառավարման համակարգի մարմինները չեն կարող պատասխանատու լինել համապատասխան վերջնական արդյունքների իրագործման համար:

<u>Արդյունքային ցուցանիշների սահմանումը</u>

41. Ռազմավարական նպատակների համար պետք է սահմանվեն իրատեսական, որակական և քանակական արդյունքային ցուցանիշներ, որոնք հետագայում հիմք կհանդիսանան ծրագրերի նպատակների չափման, առաջընթացի և արդյունավետության գնահատման համար:

42. Հիմնական արդյունքային ցուցանիշները դրանք այն հիմնական բնութագրերն են, որոնց միջոցով գնահատվում և չափվում է նպատակների իրականացումը: Արդյունքային ցուցանիշները նկարագրում են արդյունքների այն կոնկրետ մակարդակը, որը պետք է ապահովվի հաշվետու ժամանակահատվածում: Արդյունքային ցուցանիշները կարող են արտահայտվել բացարձակ թվերով, տոկոսներով կամ հարաբերակցությամբ:

43. Ռազմավարական փաստաթղթերում արդյունքների ցուցանիշները սահմանելիս, դրանցից յուրաքանչյուրի գծով պարտադիր պետք է սահմանվեն ինչպես համապատասխան թիրախային, այնպես էլ դրանց բազային ցուցանիշները: Բազային ցուցանիշները նկարագրում են համապատասխան ցուցանիշի այն փաստացի մակարդակը, որի նկատմամբ սահմանվել են թիրախային ցուցանիշները և որի նկատմամբ նաև հետագայում գնահատվելու է համապատասխան արդյունքի գծով առաջընթացը: Թիրախային ցուցանիշներն արտահայտում են համապատասխան ցուցանիշի նպատակային (ցանկալի) մակարդակը, որին ձգտում է հասնել պետությունը համապատասխան միջամտությունների միջոցով: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ թիրախային

ցուցանիշները սահմանելիս, դրանք պարտադիր կարգով պետք է կապվեն կոնկրետ ժամկետների կամ ժամանակահատվածի հետ, այսինքն պետք է հստակ լինեն այդ ցուցանիշներին հասնելու համար նախատեսված ժամկետները: Երկարաժամկետ ռազմավարությունների դեպքում, երբ կոնկրետ տարվա համար չկան սահմանված թիրախային ցուցանիշներ, ապա ծրագրի (արդյունքների) գնահատականի համար հիմք է ընդունվում մոտակա թիրախային ցուցանիշները: :

44. Ծրագրի ուղղակի արդյունքների ցուցանիշները պետք է հիմք հանդիսանան ծրագրի միջոցառումների գծով թիրախային կատարողական ցուցանիշների սահմանման համար, քանզի այդ միջամտությունների միջոցով է, որ պետական կառավարման համակարգի մարմինները փորձում են իրագործել համապատասխան նպատակներն ու վերջնական արդյունքները:

50. Որևէ նպատակի չափման համար արդյունքային ցուցանիշը որակյալ և օգտակար համարվելու համար այն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին.

1) Ցուցանիշների սահմանման ժամանակ անհրաժեշտ է խուսափել ընդհանրական, անորոշ, ոչ հստակ բնույթի արտահայտություններից (օրինակ՝ «բարձր որակով», «տարվա ընթացքում», «պատշաճ մակարդակով» և այլ արտահայտություններից),

2) Ցուցանիշը պետք է լինի հնարավորինս հստակ և պարզ ձևակերպված, խուսափելով այնպիսի տերմիններից, որոնք անհասկանալի են միջին տեղեկացվածության մարդկանց համար,

3) Ցուցանիշը կարող է լինել որակական կամ քանակական, ընդ որում քանակական ցուցանիշը պետք է լինի չափելի իսկ որակականը՝ գնահատվող

4) Ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լինի հավաքագրման համար էական և օգտագործման համար արժեքավոր,

5) Ցուցանիշը պետք է տրամաբանորեն կապված լինի համապատասխան նպատակների կամ արդյունքների հետ և նկարագրի դրանք՝ շեշտադրելով այն արդյունքները, որոնք որոշում են, թե արդյոք ծրագրի կամ ավելի բարձր մակարդակի ռազմավարական նպատակները/թիրախները նվաճվել են,

6) Ցուցանիշը պետք է լինի համադրելի, այսինքն միևնույն ցուցանիշը պետք է հնարավոր լինի ուսումնասիրել ժամանակի մեջ՝ համեմատություններ կատարելու համար,

7) Ցուցանիշը պետք է կիրառական լինի կառավարման տեսանկյունից,

8) Ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լինի ճշգրիտ, գրանցված և հասանելի,

9) Ցուցանիշի վերաբերյալ պետք է լինի պատշաճ հաշվետվողականություն, եթե անգամ այն լավը չէ,

10) Ցուցանիշը պետք է հնարավորինս կապված լինի ֆինանսավորման հետ: Այսինքն այն ցուցանիշները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնում են կամ հանգեցնելու են օրենքով թույլատրելի աղբյուրներից ֆինանսավորման:

51. Որպեսզի ռազմավարություններով սահմանված արդյունքային ցուցանիշները հնարավոր լինի կիրառել բյուջետավորման նպատակներով, անհրաժեշտ է, որ այդ ցուցանիշները լինեն հստակ նկարագրված և զուրկ լինեն այլընտրանքային մեկնաբանություններից: Այդ առումով, կարևոր է, որ ռազմավարություններին կից հավելվածներում նկարագրվեն դրանցում սահմանված հիմնական արդյունքային ցուցանիշները:

52. Ստորև ներկայացված է արդյունքային ցուցանիշների նկարագրության ձևաչափի օրինակ.

Ցուցանիշի անվանումը	Ներկայացվում է արդյունքային ցուցանիշի անվանումը
Համառոտ նկարագրությունը	Ներկայացվում է արդյունքային ցուցանիշի համառոտ նկարագրությունը
Նպատակը/ կարևորությունը	Բացատրվում է թե ինչ է ցույց տալիս ցուցանիշը և ինչու է այն կարևոր
Տեղեկատվության հավաքագրումը/ աղբյուրը	Նկարագրվում է թե որտեղից է ստացվում տեղեկատվությունը և ինչպես է այն հավաքագրվում
Հաշվարկման մեթոդը	Հստակորեն նկարագրվում է թե ինչպես է ցուցանիշը հաշվարկվում
Տեղեկատվության սահմանափակումները	Բացահայտվում են ցուցանիշի հետ կապված տեղեկատվության բոլոր սահմանափակումները, ներառյալ գործոնները, որոնք դուրս են ոլորտային գերատեսչությունների վերահսկողությունից
Ցուցանիշի տեսակը	Ներկայացվում է, թե ինչ է չափում ցուցանիշը (վերջնական, միջանկյալ կամ ուղղակի արդյունք, կամ կատարողականի այլ չափումներ՝ ծախսարդյունավետություն, նպատակային արդյունավետություն)
Չափման միավորը	Նկարագրում է, ցուցանիշի չափման միավորը (տոկոս, մաս, հատ և այլն)
Ներկայացման եղանակը	Նկարագրում է, թե ինչպես է ներկայացվում կատարողականը՝ կուտակային թե ոչ կուտակային եղանակով
Հաշվետվողականության ցիկլը	Ներկայացվում է ցուցանիշի հաշվետվողականության պարբերականությունը՝ ամսական, եռամսյակային կամ տարեկան
Թույլատրելի շեղումը	Բացահայտում է, թե թիրախային մակարդակի համեմատ փաստացի ցուցանիշի քանի տոկոսային կետով շեղումն է համարվում թույլատրելի
Պատասխանատվությունը	Ներկայացնում է ցուցանիշի ձեռք բերման և հաշվետվողականության համար պատասխանատու

	միավորը

53. Վերոհիշյալ պահանջները պետք է վերաբերվեն ինչպես ռազմավարական նպատակները նկարագրող արդյունքային ցուցանիշներին, այնպես էլ կարող են վերաբերվել այդ նպատակների հասնելու համար իրականացվող ծրագրի միջոցառումների համար սահմանվող հիմնական կատարողական ցուցանիշներին:

Գերակայությունների սահմանումը

54. Բյուջետային (ՄԺԾԾ) փուլում բյուջետային ծրագրերի/ծախսերի միջև գերակայությունների սահմանումը պետք է հնարավորինս փոխկապակցվի/բխի ռազմավարություններում սահմանված ռազմավարական նպատակների գերակայություններից:

55. Այդ առումով, ռազմավարություններում պետք է սահմանվեն հստակ գերակայություններ կամ առաջնահերթություններ ռազմավարական նպատակների և միջոցառումների միջև: Այդ գերակայությունները սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերջիններս բյուջետավորման փուլում պետք է դրվեն այդ նպատակների իրագործմանն ուղղված բյուջետային ծրագրերի/միջոցառումների միջև գերակայությունների/առաջնահերթությունների սահմանման հիմքում:

56. Կարևոր է, որ ռազմավարական նպատակների միջև սահմանվող գերակայություններն իրենց անմիջական արտացոլումը գտնեն նաև համապատասխան ծախսային գնահատականների (ֆինանսական ռեսուրսների բաշխման) տրամաբանության մեջ: Այսինքն, ավելի գերակա նպատակների կամ ոլորտների համար նախատեսվող ծախսային գնահատականները ռազմավարության շրջանակներում կարող է ենթադրեն ավելի բարձր աճի տեմպեր:

57. Կարևոր է, որ ոլորտային նպատակների համար գերակայությունները սահմանվեն քաղաքականության շուրջ շահագրգիռ կողմերի հետ (ներառյալ քաղաքացիական հասարակությունը) քննարկումներից հետո:

Ծախսային գնահատականների ներկայացումը

58. Ռազմավարությունների (ռազմավարական նպատակներն ու դրանց գծով արդյունքային ցուցանիշները) իրատեսականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ բոլոր ռազմավարություններն ունենան հստակ ծախսային գնահատականներ: Այդ ծախսային գնահատականները պետք է լինեն հիմնավոր ու իրատեսական և ընդգրկեն ռազմավարություններով սահմանված բոլոր նպատակներն ու ծրագրերը:

59. Կարևոր է, որ հիշյալ ծախսային գնահատականներն ընդգրկեն ռազմավարությունների իրականացման հետ կապված բոլոր ծախսերը (ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ բնույթի), ընդգրկեն ռազմավարության ողջ ժամանակահատվածը և հնարավորինս բխեն միջնաժամկետ և երկարաժամկետ հարկաբյուջետային կանխատեսումներից, ինչպես նաև հիմնավորվեն հիմնական կատարողական ցուցանիշների կանխատեսվող դինամիկայով:

60. Ռազմավարություններին առնչվող ծախսային գնահատականները պետք է սահմանվեն ոչ միայն ողջ ռազմավարության, այլ նաև դրա շրջանակներում իրականացվելիք նպատակների և/կամ ռազմավարական ծրագրերի/միջոցառումների մակարդակով, որոնք այնուհետև բյուջետային

ծրագրերի միջոցով պետք է փոխանցվեն բյուջետավորման համակարգ և հիմք հանդիսանան ՄԺԾԾ և բյուջետային հատկացումների սահմանման համար:

61. Ռազմավարություններում ծախսային գնահատականները կազմելիս պետք է հնարավորինս հաշվի առնվեն նաև տվյալ ծրագրի/միջոցառման գծով ծախսերի և կատարողականի նախորդ տարիների միտումները և գործող ՄԺԾԾ-ով սահմանված ծախսային գնահատականներն ու սահմանափակումները:

62. Ռազմավարություններում պետք է ներկայացվեն ծախսային միտումները և այդ ծախսերի համար պահանջվող ռեսուրսների ակնկալվող աղբյուրները, ինչպես նաև ներկայացվեն դրանց հետ կապված հիմնական ռիսկերը:

63. Ոչ բյուջետային աղբյուրներից ակնկալվող միջոցների նախատեսման դեպքում պետք է հստակորեն ներկայացվեն նաև այդ միջոցների չստացման հետ կապված ռիսկերը և այդ ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները:

IV. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

<u>Ռազմավարական փաստաթղթերի կազմման և ներկայացման գործընթացի կազմակերպումը պետական կառավարման համակարգի մարմիններում</u>

64. Ռազմավարական (բացառությամբ ՀՌՓ-ների) փաստաթղթերը մշակվում են համապատասխան ոլորտային պետական կառավարման համակարգի մարմինների կողմից: ՀՌՓ-ները նախաձեռնվում և մշակվում են ՀՀ կառավարությանը կից Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի կամ այդ նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովների կողմից:

65. Պետական կառավարման համակարգի մարմիններում ռազմավարական պլանավորման գործառույթները կազմակերպվում և իրականացվում են այդ գերատեսչությունների Ռազմավարական պլանավորման գործառույթների իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների կամ անձնակազմի կողմից: Վերջիններս.

1) Նախաձեռնում, իրականացնում կամ կազմակերպում են համապատասխան ոլորտային ՄՄՌՓ (ոլորտային ռազմավարական փաստաթղթերի) և ԲԾՌ-ների նախագծման և շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցման աշխատանքները՝ ներառյալ առկա փաստաթղթերի թարմացումները: Այդ աշխատանքներն իրականացնելիս նշված միավորներն ապահովում են նշված փաստաթղթերի համահունչությունն ու կապը ավելի բարձր մակարդակի գործող ռազմավարություններով, օրենքներով և միջազգային համաձայնագրերով՝ ոլորտի կամ գերատեսչության համար սահմանված ռազմավարական նպատակների և թիրախների հետ, ինչպես նաև ապահովում է այդ փաստաթղթերի բովանդակության և կառուցվածքի համապատասխանությունը վերջիններիս մշակման և ներկայացման համար սահմանված օրենսդրական և մեթոդաբանական պահանջներին:
2) Կազմակերպում և իրականացնում են ռազմավարության ազդեցության գնահատումներ: Ռազմավարության ազդեցության գնահատումների (ՌԱԳ)

նպատակն է պարզել, թե որքանով են ռազմավարությամբ առաջարկվող կամ սահմանված միջոցառումներն ու ցուցանիշները նպաստում (արդյունավետ) ռազմավարության հիմքում դրված նպատակների իրագործմանը: պետական կլառավարման համակարգի մարմինների կողմից ՌԱԳ-երը պետք է իրականացվեն պարբերաբար՝ առնվազն դրանց մշակման, վերանայման և արդյունքների գնահատման փուլերում՝ այդ աշխատանքներում անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան մասնագիտացված արտաքին հետազոտական և վերլուծական կառույցների:

3) Իրականացնում է մշտադիտարկում համապատասխան ոլորտային ռազմավարությունների և ԲՌԾ-ների կատարման ընթացքի նկատմամբ և այդ փաստաթղթերի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ է կազմում և պարբերաբար ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ:
4) Ներգրավվում է ոլորտի/ գերատեսչության ՄԺԾԾ մշակման գործընթացում՝ հիմնականում ռազմավարական և ոչ ֆինանսական հարցերում:
5) ԲԾՌ-ները հաստատվում են պետական կառավարման համակարգի մարմինների կողմից, իսկ միջին (ոլորտային) մակարդակի ռազմավարական փաստաթղթերը հաստատման նպատակով պետական կառավարման համակարգի մարմինների կողմից ներկայացվում են ՀՀ կառավարություն:

66. Անկախ դրանց մակարդակից, բոլոր ռազմավարական փաստաթղթերը, նախքան դրանց հաստատումը, պետք է պարտադիր դրվեն հանրային քննարկումների՝ ՀՀ օրենսդրությամբ հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման համար սահմանված ընթացակարգերին համապատասխան:

67. Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ենթադրող բոլոր ռազմավարություններին կից կազմվում են Ռազմավարական փաստաթղթի տիտղոսաթերթեր, որում ներկայացվում է ամփոփ տեղեկատվություն ռազմավարական փաստաթղթի անվանման, մշակող մարմնի, կարգավիճակի (նոր/վերանայված ծրագիր), մշակման հիմքերի, պետական ծախսերի վրա ազդեցության գնահատականի, ընդգրկման ժամանակահատվածի, ներառված ոլորտների, նպատակների և կատարողական ցուցանիշների վերաբերյալ:

68. Պետական ծախսերի վրա ազդեցության գնահատականները պետք է հստակեցնեն այդ ազդեցության ուղղություններն ու չափերը: Մասնավորապես պետք է հստակեցվեն եկամուտների և ծախսերի ընդհանուր մակարդակի նվազեցման կամ ավելացման հանգեցնող դեպքերը, ինչպես նաև ոլորտային, ենթաոլորտային և ծրագրային վերաբաշխումներ առաջացնելու հանգամանքը:

69. ՄԺԾԾ և բյուջետային որոշումների ընդունման համար հիմք կարող են ծառայել միայն այն ռազմավարական փաստաթղթերը, որոնք նախքան հաստատվելը հստակ ենթադրել են ազդեցություն բյուջեի եկամուտների և ծախսերի վրա և առանձնացվել են որպես այդպիսիք: Մյուս բոլոր ռազմավարական փաստաթղթերն ընդունվելուց հետո չեն կարող դրվել ՄԺԾԾ և բյուջետային որոշումների հիմքում: Ռազմավարական փաստաթղթի տիտղոսաթերթի օրինակելի ձևը կցվում է:

70. Տիտղոսաթերթը, ի լրումն ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի, հանդիսանում է շրջանառության մեջ դրվող ռազմավարական փաստաթղթի նախագծի անբաժան մասը:

Ռազմավարական պլանավորմանն առնչվող գործընթացների կազմակերպումը ՀՀ կառավարության աշխատակազմում

71. ՀՀ կառավարության աշխատակազմում ռազմավարական պլանավորմանն առնչվող գործառույթները կազմակերպվում և իրականացվում են ՀՀ կառավարության աշխատակազմի Ռազմավարական պլանավորման գործառույթների համակարգման համար պատասխանատու կառուցվածքային միավորի կողմից:

72. Վերջինս իրականացնում է ՀՀ-ում ռազմավարական փաստաթղթերի մշակման աշխատանքների ընդհանուր համակարգման, մեթոդական ուղղորդման և ռազմավարական փաստաթղթերի կատարման նկատմամբ ընդհանուր հսկողության գործառույթները: Մասնավորապես.

1) իրականացնում է ՀՌՓ-ների և պետական կառավարման համակարգի մարմիններից ստացվող միջին (ոլորտային) մակարդակի ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրություն և ՀՀ կառավարության աշխատակազմում նախագծի շուրջ քննարկումների և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացման գործընթացի կազմակերպում,
2) կազմակերպում է ՀՀ կառավարության գործառնական պլանավորման (ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների տարեկան ծրագրի կազմման) գործընթացը և իրականացնում է հսկողություն դրա նկատմամբ,
3) իրականացնում է մշտադիտարկում ՀՀ կառավարության կողմից հաստատված համապատասխան ՀՌՓ-ների և ոլորտային ռազմավարությունների կատարման ընթացքի նկատմամբ և այդ ռազմավարությունների կատարման ընթացքի վերաբերյալ կազմում է հաշվետվություններ,
4) համակարգում է ռազմավարական փաստաթղթերի հաշվառման և գույքագրման գործընթացը՝ այդ թվում և համապատասխան էլեկտրոնային շտեմարանների ձևավորման և վարման միջոցով,
5) իրականացնում է հսկողություն ՀՀ կառավարության կողմից հաստատվող ռազմավարական պլանավորման փաստաթղթերի թարմացումների նկատմամբ,
6) պետական մարմիններից ստացված ազդեցության գնահատումների նախնական ուսումնասիրություն և ավելի խորությամբ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով մասնագիտացված միավորի/փորձագետների ներգրավման կարիքի գնահատում,

73. ՀՀ կառավարության աշխատակազմի ռազմավարական պլանավորման գործառույթների համակարգման համար պատասխանատու կառուցվածքային միավոր են ներկայացվում միայն այն ռազմավարական փաստաթղթերը, որոնք ենթադրում են ազդեցություն բյուջետային եկամուտների և ծախսերի վրա: Նման ազդեցություն չենթադրող ռազմավարական բնույթի փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ կառավարության աշխատակազմի համապատասխան ոլորտային ստորաբաժանումներ:

V. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

74. Ռազմավարական փաստաթղթերի արդիականությունն ու համահունչությունն ավելի բարձր մակարդակի ռազմավարական փաստաթղթերի և

ՄԺԾԾ հետ ապահովելու նպատակով, ոլորտային պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմինները յուրաքանչյուր տարի, հերթական բյուջետային գործընթացը սկսվելուց հետո, իրականացնում են իրենց ոլորտի ռազմավարական փաստաթղթերի հաշվառում:

75. Հաշվառումը իրականացվում է առնվազն հետևյալ հայտանիշներով.

1) ռազմավարական փաստաթղթերի անվանացանկը, դրանց ընդունման ամսաթիվը, ընդունող մարմինը, ակտի համարը, ինչպես նաև ռազմավարական փաստաթղթի մակարդակը՝ «համապարփակ», «միջին մակարդակի», «բյուջետային ծրագրի»,
2) ռազմավարական փաստաթղթի հղումը գործող ՄԺԾԾ փաստաթղթին,
3) ռազմավարական փաստաթղթով նախատեսված պետական ծախսերի մակարդակի համադրումը գործող ՄԺԾԾ-ի հետ: Հնարավորության դեպքում տրվում է տարբերության վերագնահատված արժեքը՝ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար,
4) ռազմավարական փաստաթղթի վերաբերյալ հաշվետվությունների առկայությունը և վերջին հաշվետվության ամսաթիվը,
5) վերջին հաշվետվությամբ արձանագրված առաջընթացը հիմնական արդյունքների առումով՝ «կատարված է», «ընթացքը բավարար է», «հնարավոր է կատարել առաջիկա մեկ տարում», «չի կատարված» և «չի կարող կատարվել»: Բացատրվում են չկատարման պատճառները:

76. Հաշվառման արդյունքներով պետական կառավարման համակարգի մարմինները կազմում են վերանայման ենթակա և ընդունման ենթակա նոր ռազմավարությունների անվանացանկը: Անվանացանկը կազմելիս հիմք են ընդունվում գույքագրման արդյունքները, ՀՀ կառավարության ծրագրի պահանջները, գործող ՄԺԾԾ-ը:

77. Հաշվառման արդյունքներով հստակեցվում են նաև ծախսային վերլուծությունների իրականացման, ինչպես նաև լրացուցիչ ռազմավարության ազդեցության վերլուծության անհրաժեշտության հանգամանքները:

78. Հաշվառման արդյունքներով վերանայման ենթակա և ընդունման ենթակա նոր ռազմավարությունների անվանացանկըպետական կառավարման համակարգի մարմինները ներկայացնում են ՀՀ կառավարության աշխատակազմ մինչև յուրաքանչյուր տարվա մայիս ամիսը:

ՁԵՎ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ

<u>Ռազմավարական փաստաթղթի տիտղոսաթերթ</u> Սույն տիտղոսաթերթը պարունակում է տեղեկատվություն ներկայացվող նախագծի/ գույքագրման նպատակներով ռազմավարական փաստաթղթի/ վերաբերյալ համաձայն ------ հրահանգի հավելված 1.1

1. Անվանումը	
2. Մշակող մարմինը	

3. Նոր կամ վերանայում	Նոր ☐	Վերանայում ☐	
4. Մշակման հիմքերը			
4.1 Նոր և վերանայում	Համառոտ նկարագիր		
	Հիմքերը		
	1. Կառավարության ծրագիր	☐	
	2. ՀԶՈԾ	☐	
	3. Երարաժամկետ բարեփոխումների ծրագիր	☐	
	4. Այլ համապարփակ ռազմավարական փաստաթուղթ	/նշել անվանումը այստեղ/	
	5. ՀՀ օրենք	/նշել անվանումը այստեղ/	
	6. ՀՀ կառավարության որոշում	/նշել անվանումը այստեղ/	
	7. Միջազգային պարտավորություն	/նշել անվանումը այստեղ/	
	8. Այլ	/նշել անվանումը այստեղ/	
	Լրացուցիչ մեկնաբանություններ		
4.2 Վերանայում /լրացուցիչ տեղեկատվություն/	Վերնայավող փաստաթղթի անվանումը՝		
	Վերջին երեք տարիներին վերանայվող ռազմավարության հաշվետվություն որապարակվել է	Այո ☐	Ոչ ☐
	Վերանայվող փաստաթղթի վերջին հաշվետվության որապարակման ամսաթիվը՝		
	Վերնայվող փաստաթղթի հաշվետվությունը ներկայացվում է ռազմավարական փաստաթղթի հետ միասին	☐	

5. Ժամկետը	3 տարի ☐	5 տարի ☐	5 և ավելի ☐
6. Ազդեցությունը պետական ծախսերի վրա	Եթե Այո ☐ , ապա	Ոչ[1] ☐	
6.1 Ազդեցությունը մշակվող ՄԺԾԾ վրա	Այո ☐	Ոչ ☐	
6.2 Ընդհանուր ավելացում	Այո ☐	Ոչ ☐	
6.3 Ազդեցությունը ոլորտային սահմանաքանակների վրա	Այո ☐	Ոչ ☐	
6.4 Ազդեցությունը բյուջետային ծրագրերի վրա	Այո ☐	Ոչ ☐	
6.4.1 Նոր բյուջետային ծրագիր	Այո ☐	Ոչ ☐	
6.5 Ազդեցության արժեքային գնահատականը	Պետական ծախսերի ընդհանուր մակարդակը տարեկան միջին մակարդակը առաջին 5 տարիների համար առանց ռազմավարական փաստաթղթի մլն դրամ	Պետական ծախսերի ընդհանուր մակարդակը տարեկան միջին մակարդակը առաջին 5 տարիների համար ռազմավարական փաստաթղթի ընդունման դեպքում մլն դրամ	
7. Պետական ծախսերի ուսումնասիրություն	Այո ☐	Ոչ ☐	
7.1 Ծախսերի ուսումնասիրության ժամանակահատվածը	Վերջին 3 տարին ☐	3 և ավելի տարի ☐	
8. Պահանջում է օրենսդրական փոփոխություն / բացի բյուջետային ծախսերին վերաբերող/	Այո ☐	Ոչ ☐	
8. 1 ՌԱԳ	Այո ☐	Ոչ ☐	
9. Ներառված ոլորտների ֆունկցիոնալ կոդերը կամ բյուջետային ծրագրերի			

[1] Պետական ծախսերի վրա ազդեցություն չունենալու դեպքում՝ 6.1-6.5 կետերը չեն լրացվում:

կոդերը				
10. Նպատակներ	Բարձր մակարդակի նպատակներ ☐		Միջին մակարդակի նպատակներ ☐	
10.1 Բարձր մակարդակի նպատակներ	Նպատակ	Չափման ցուցանիշ	Բազային տարվա գնահատական	Թիրախ
10.2 Միջին մակարդակի նպատակներ	Ծառայում է բարձր մակարդակի իրագործմանը ☐		Բարձր մակարդակի նպատակ սահմանված չէ ☐	
10.2.1 Բարձր մակարդակի նպատակների հետ կապը	Բարձր մակարդակի նպատակներ		Միջին մակարդակի նպատակներ	
10.3 Միջին մակարդակի նպատակներ	Նպատակ	Չափման ցուցանիշ	Բազային տարվա գնահատական	Թիրախ
10.4 Ուղղակի	Նպատակ	Չափման	Բազային	Թիրախ

արդյունքներ		ցուցանիշ	տարվա գնահատական	
1. Հանրային քննարկումներ	Այո	☐	Ոչ	☐
1.1 Նախագիծը հրապարակվել է կայքում	Այո	☐	Ոչ	☐
1.2 Հրապարակման ամսաթիվը				
1.3 Կազմակերպվել է քննարկում	Մեկ	☐	Մեկից ավելի	☐
1.4 Ստացված առաջարկությունների քանակը	Մինչև 5	☐	5-ից ավելի	☐
1.5 Ստացված առաջարկների հիման վրա բովանդակային փոփոխություն կատարվել է	Այո	☐	Ոչ	☐